



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1647



1003 1307

ՄՈՒՏ
ԱԶԳԱՍԷՐ



Կ. ՊՕԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՔԻՒՐԻՃԵԱՆ

— 1863 —



ՍՈՒՏ ԱԶԳԱՍԷՐ



ՀԵՂԻՆԱԿՈՒԹԵԱՄԲ

ԵՒ

ԱՐԴԵԱՄԲ

ԴԵՐԶՍԿԵԱՆ Մ. ԳՐԻԳՈՐ

Վ. Ա. ՐԺԱՊԵՏԻ

Ի ՍԷՐ ԱԶԳԻՍ

1647



ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
ՌՈՒԲԵՆԻ Յ. ՔԻՒՐՔՆԵԱՆ
Կ.—ՊՕԼԻՍ ՅԻՆՃԱՆՃԸԼԱՐ
—1865—

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
Տ. Տ. Մ Ա Տ Թ Է Ո Ս Ի
ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՒՂՈՍՈՍԻ

Ի ՊԱՏՐԻԱՐԳՈՒԹԵԱՆ
ՍՐԲՈՅՆ ԵՐՈՒՍԱՂԻՄԱՅ
Տ. ԵՍԱՅԵԱՅ

ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐԳՈՒԹԵԱՆ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ
Տ. ՊՕՂՈՍԻ

Յ Ս Ռ Ս Ջ Ս Բ Ս Ն Ո Ի Թ Ի Ի Ն




Ամենացանկալի եւ ամենագովելի ճըշմարիտ Ազգասէրնէրը՝ ազգախնամ լուսաւոր առաքինութեամբ կը նմանին պայծառագոյն մշտափայլուն անդամանդ քարի, որ ոչ կ'այրի եւ ոչ կը բեկանի դիւրաւ, եւ ոչ իր լոյսը կը կորսնցունէ բնաւ. եւ թէ որ կռանաւ կտորեն, եռանկիւնի կը ձեւանայ ամեն մէկ կտորը: Ճշմարիտ Ազգասէրներն ալ այսպէս չեն մի. նեղութեան մէջ ալ ըլլան՝ երեք ձեւով մշտափայլ ցոլացունեն խնամողական լուսերնին. հաւասարաչափին ալ, մեծամեծաց ալ, փոքրկանց ալ:

Որով Երկնաւոր Թագաւորին հաճելի կ'ըլլան, ինչպէս որ թագաւորներուն կը վայլէ ընտիր անդամանդը, թանկագին ըլլալուն համար: Ինչու որ մշտայօժար են բազմադիւն յարգելու Աստուածային պատուէրը: «Սիրեցեա զընկեր քո իբրեւ զանձն քո»:

Բայց ոմանք կեղծաւորաբար սուտ կը պարծին ու անօրէնութիւն եւ ազգատեցութիւն է ըրածնին . անոր համար սուտ ազգասէր կը կոչուին : Ուստի՝ կը յուսանք որ անանկներ ուր որ գտնուին , այս տեսութեամբ կարդալով՝ ըրածնին յիշեն ու զղջան , եւ միանգամայն այս մեր եղբայրսիրական ջանքը վարձատրեն բարեմաղթութեամբ :

Միտք արթնցընող փոքրիկ զանգակի լեզու մի է այս . մեծ զանգակի ձայնն ալ քարոզիչ վարդապետներէն թող լսեն :



Ազգասիրաց խումբ երջանիկ,
զի Աստուծոյ են հաճելիք :

Ազգասէրք են խիստ ցանկալի,
ամեն ազգաց ալ գովելի :

Ազգասիրաց աղնիւ անուն,
ցանկալի է ամենեցուն :



ՍՈՒՏ ԱԶԳԱՍԷՐ



Ա՛


Սուտ ազգասէր շատ գտնուի ,
քան ճշմարիտ ընտիր բարի :
Ազգասէր շատ կայ բիւրաւոր ,
միայն բանիւ ո՛չ գործաւոր :
Թէ սէրն առանց արդեամբ ըլլայ ,
ազգասիրի գործ ե՞րբ կ'ըլլայ :
Թէ աղբիւր մը ըլլայ ցամաք ,
ի՞նչ կը խմենք որ գոհանանք :
Ազգասիրին ճշմարտութիւն ,
արդեամբ վառիլ եղբօր սիրուն :
Սուտ ազգասէրք են կեղծաւոր ,
չե՛ն կամենար բարիս եղբօր :
Սուտ ազգասէրք են խաբեբայ ,
անոնց խոստմունք չե՛ն աներկբայ :
Առանց արդիւնք Ազգասէր բառ ,
զրոյց և ձայն է՛ վայրապար :

Եղովբոսի սուտ ոսպաթան ,
չի կշտացուց անոր սեղան :
Աեցցէ Ազգս ըսել պօռալ ,
սուանց անձրեւ երկինք գօռալ :
Խաղ կանչելով ուտէ խմէ ,
չըսեր աղքատն անօթի է :
Պար առնելով խաղայ խնդայ ,
չըսեր թէ տան մօտ հիւանդ կայ :
Ազգս անկէ խեր չի յուսայ ,
ով որ միայն խնդրէ իր շահ :
Երբոր անկիրթ մէկը տեսնան ,
խրրատ տալու կը ձանձրանան :
Անկիրթ բան մը ընէ տղան ,
սուտ ազգասէրք չե՛ն սաստեր զայն :
Աոկորդնին բաց է բարկանալ ,
երբ պատահի բան մը դժար :
Ամեն փոքր ոչինչ բանին ,
նայիս յանկարծ կը խռովին :
Աղօթք ընել այլոց համար ,
բնաւին չեն ըլլար յօժար :

Մնջեցելոց մերոց համար ,
չիյտեն ըլլալ աղօթարար :
Արհեստաւոր այլոց շէնքին ,
բնաւ երբէք ոչ ախորժին :
Ով անգոսնէ այլոց շինած ,
չէ՛ Ազգասէր , այլ չար նախանձ :
Երբ պակսութիւն այլոց տեսնան ,
չատ առաւել կ'ուրախանան :
Այլոց յանցանք երես տալու ,
անխոնջ ունին պատրաստ լեզու :
Այլոց սիրտը խոլտակելու ,
հնարագէտ են խօսելու :
Այլոց աչքին շիւղը քննեն ,
իրենց գերան ոչ նշմարեն :
Բամբասանաց խօսակցութեան ,
ուշադրութեամբ լսել ցանկան :
Սուտ ազգասէր մարդու նշան ,
թէ բամբասող ունի բերան :
Նախատանաց տրկար մարդկան ,
ուրախութեամբ զուարճանան :

Բամբասանք ով կ'ուզէ լսել,
ան ալ կ'ըսուի սուտ Ազգասէր :
Չե՛ն համարիր զայն մտերիմ,
ով գովաբան ըլլայ ազգին :
Թէ անիրաւ թէ զրպարտիչ,
ասոնցմէ է ազգիս մատնիչ :
Նենգաւոր և խռովարար,
հակառակորդ և կռուարար :
Ով ճշմարիտ Ազգասէր չէ,
անոր պահճու բան տալ պէտք չէ :
Գողաբարոյ կայտառին պէս,
ստացուածքրդ կրնայ ուտէր :
Սուտ ազգասէրք կը պահեն նենդ,
մինչև անգամ կու տան անէծք :
Արբ և այրի են անխնամ,
զի Ազգասէրք նուազեցան :
Հաղարին մէկ մը Ազգասէր,
ինչպէս բաւ է բազմաց օգնել :
Քանի որ կայ սուտ ազգասէր,
չի պակասիր մեր աղքատներ :

Ով որ չըլլայ եղբայրասէր ,
ի՞նչպէս կ'ըլլայ այն Ազգասէր :
Ով որ չըլլայ և Ազգասէր ,
ի՞նչպէս կ'ըլլայ Աստուածասէր :
Ազգս ունի շատ անդամներ ,
տեսնանք ո՞րն է ճիշդ Ազգասէր :
Ճշմարիտ և սուտ ազգասէր ,
մէկզմէկէ շատ են տարբեր :
Թէ ճիշդ թէ սուտ ազգասէր մարդ ,
իրենց գործով կ'ըլլան մեզ յայտ :
Բարեւ տալը սեպեն ամօթ ,
երբ որ մէկը տեսնան ծանօթ :
Երբ ակամայ բարեւ առնեն ,
կիսատ բառ մը բերնուց հանեն :
Ճիշդ Ազգասէրք մնան անսիրձ ,
սուտ ազգասէրք են այժմ իմ գործ :



Մէկը ըսեմ իշխանագուն ,
որ շատ ըրած է գողութիւն :

Անչափօրէն գործէ չարիս ,
որ նախատինք եղաւ Ազգիս :
Այնպիսաւոյն պէտք չէ՛ տալ անուն ,
իրեն գործն է իրեն անուն :
Ինչո՞ւ կ'ըսուի չար մեծատուն ,
ո՞ւր է դրուած անոր անուն :
Յօդուածիս մէջ համառօտեմ ,
նանիր գործերն ինչ որ գիտեմ :
Անոր հետ որ քիչ մը խօսիմ ,
Ազգասէրներն չի սրդողին :
Խրատ ըլլայ այս մերին լուր ,
որ գործակից չըլլանք անոր :
Անունդ հաներ ես Ազգասէր ,
կ'ուտես վանքին դիրուկ հաւեր :
Ահա դուն ես սուտ ազգասէր ,
յափշտակես եկամուտներ :
Ազգը ժամուն է նուիրեր ,
այն վարձք բերող մեծ խանութներ :
Ար հաւաքես ամեն տարի ,
ըսող չի կայ ո՞ւր կը տանի :

Ե՛ր չի վախնանք կ'ըսեն անկէ ,
որ չի վախնար այն Աստուծմէ :
Խօսքն ալ դործն ալ է անխրաւ ,
նենդաւ և դաւ է իր դրաւ :
Ժամուն երեք հատ կալուածքներ ,
պատրաստեցին տանըդ մթեր :
Մէկ կալուածք ալ տուիր անոր ,
որ տունըդ էր ըսպասաւոր :
Եկեղեցին ի՞նչ պարտք ունի ,
քուկին տանըդ սպասաւորի :
Ժամուն երեք խոշոր խալկին ,
դործարանիդ մէջ կը բանուին :
Եօթը հօխայ արծաթ կանթեղ ,
փողերանոց բերիր ծախել :
Ժողովուրդին բերած նուէր ,
ծախէ ու կեր մէկու մ'ըսեր :
Մէկ տարուան շահ երկու հազար ,
մումաճախէն առիր կերար :
Ժամանակին պիտի դողաս ,
երանի թէ այժմէն զղջաս :

Յիմար կուսանք երբ իւղ խնդրեն ,
գողցածդ կ'օգտէ պիտի ըսեն :
Տղայքդ մեծնան ասանկ հացով ,
վճարելոց են քեզ ծեծով :
Եփսո՛ս այնպէս մեծ դպրատան ,
որ փակեր ես անոր խնամ :
Մեծ չարութիւն է սաստկաբար ,
յափշտակել ժամուէն նպար :
Քանի քանի ասոնց նման ,
տեղացիք են վրկայաբան :
Ալ գտնուին այսպէս տեղեր ,
թէ որ շրջին քաջ քննիչներ :
Ով որ ըրած է այսպէս բան ,
իրենք իրենց յիշեն զղջան :
Ով ըրած է այսպէս եղեռք ,
այն կ'ուենենայ իր վրայ կեռք :
Գողութեան գործ ով է ըրած ,
սրտադող է և տրտմազգեաց :
Ով գողանայ այլոց ապրանք ,
սուտ ազգասէր է խիտ անարգ :



Տեանանք հիմայ ի՞նչ կը զուրցեն ,
սուտ ազգասէրք իրենց կողմէն :
Սուտ ազգասէրք սուտ կը պարծին ,
ինչպէս հիմայ պիտի խօսիմ :
Թէև խօսիմ ես հենդնօրէն ,
անոնց ըսածն միշտ այսպէս են :
Ազգիս հացով լաւ սընանիմ ,
այսու կերպով երբ կերակրիմ :
Այս կանոններն ո՞ւսկից ելան ,
որ իմ շահերըս կտրեցան :
Ես չեմ ուզեր այդ կանոններ ,
որ իմ շահուս դէմ են եղեր :
Ինչո՞ւս պէտք է օրէնք սահման ,
որ իմ շահուս չըլլար դարման :
Օտխք ի՞նչ պէտք է ազգիս դպրոց ,
զարդարուն պէտք է իմ ծաղկոց :
Իմ զաւակս է միշտ ինձի մօտ ,
ազգիս տըղայք են ինձի խորթ :

Միան ու գինին աղէկ ճանչնայ ,
 մասունք բանի թող չի ճանչնայ :
 Ինչո՞ւ պէտք է մասունք բանի ,
 պէտք է գնել ինձ լաւ գինի :
 Տղաս թէ որ դպրոց խաւրեմ ,
 վարժապետներն դրամ կ'ուզեն :
 Ես չեմ ուզեր այնպէս խնամ ,
 որ ետքէն ալ խնդրեն դրամ :
 Տղաս ինչո՞ւ ըլլայ պատճառ ,
 ազգիս մանկանց համար տուրք տալ :
 Պէտք չէ՞ դրոց հրմուտ ըլլալ ,
 դանձրս պէտք է առատանալ :
 Տղաս ինչո՞ւ խաւրեմ դպրոց ,
 թող իմ հետըս դայ սրճանոց :
 Գինետան մէջ երբ որ խմեմ ,
 տղաս այն տեղ ներկայ կ'ուզեմ :
 Ինչ որ գիտէ բաւական է ,
 լեզու սովորիլ եւել բան է :
 Օւաւ կիս քիչ մը սովորեցունեն ,
 վախնամ երբեմն յանդիմանեն :

Բարեկամ չէ այն իմ առջիս ,
ով ծոյլ ըսէ իմին զաւկիս :
Մեծ անարգանք կ'ըլլայ պատուոյս ,
երբ ստահակ ըսեն տղուս :
Իմ հացովքս տրդաս սնաւ ,
վարպետն ինչո՞ւ անոր դպաւ :
Իմ զաւակս է ազնուական ,
ինչո՞ւ անոր ծեծ սպառնան :
Հարուստի մը ընտիր զաւակ ,
ի՞նչպէս նստի աղքատաց կարգ :
Քուներ ի՞նչպէս ձգէ մէկ դի ,
ժամ կամ դպրոց երթայ տքնի :
Ուսմունք սովորիլ ո՞վ դիմանայ ,
անանկ տղան դպրոց երթայ :
Գորովագու՞թ եմ իմ զաւկիս ,
կ'օգտէ շրջիլ մէջ պարտիզիս :
Ճամբորդութիւն էր վայրապար ,
որ երբեմն դպրոց կ'երթար :
Մեծ դիտնական սեպեմ տղաս ,
երբ լաւ սանտրէ իր դլխուն մազ :

Օւաւկիս հանդերձ նայիմ'նորել ,
հիւանդանոցն ալ եւել բեռ ։
Արը աղքատ որը հիւանդ ,
ողջութիւն պէտք է ինձ առատ ։
Տանրս միժեր շատ պէտք է ինձ ,
քան տնանկաց ածուխ բրինձ ։
Հարսնիքիս ծախք քսան հազար ,
ի՞նչպէս տեսնամ դրան Ղազար ։
Դարման պէտք է իմ ձիերուս ,
ազգը կրնայ շտկել իր կուղ ։
Գանձիս աման դեռ չի լեցաւ ,
ի՞նչպէս հոգամ ազգային ցաւ ։
Ըտեմարանս պէտք է լեցուն ,
քան ազգային շահ մեծագոյն ։
Եկէք խնդանք մենք մեզի հետ ,
ազգըս խաղաղ չըլլար երբէք ։
Ըմպանակներն իրար զարնենք ,
ազգասիրաց նշան յայտնենք ։
Բա՛ւ է ազգիս անուան խնդանք ,
ինչո՞ւ համար մենք ալ տուրք տանք ։

Նզբայրութիւն բաւ է այսքան ,
որ կը յիշեմ մեծ Հայաստան :

Ա՛ռզեմ ահանջս տինձ մնայ ,
քան թէ տքնիմ ազգիս վրայ :

Ե՛սօր գոնէ երեսս պահեմ ,
չըլլայ զիս ալ հրաւիրեն :

Չեռքէս չի գար ազգիս գործքեր ,
տանս նկար նայիմ փոխել :

Եզգութիւնը ես լաւ գիտեմ ,
բայց դրամը քան զայն ընտրեմ :

Ար բաղձամ որ ազգս սիրեմ ,
բայց նախ կ'առզեմ որ զիս սիրեմ :

Եզգէս օգուտ մը չունենամ ,
ի՞նչպէս անոր վրայ խայտամ :

Եզգս երբ որ զիս կը յարգէ ,
արժանի եմ ես ՚ի հարկէ :

Պարապ տեղը ի՞նչպէս սիրեմ ,
թէ որ ինձի պատիւ չընեն :

Ա՛ռզեմ ազգիս իշխան ըլլալ ,
բայց չեմ կրնար ազգս հոգալ :

Ազգիս օգնել է հարկաւոր ,
բայց ես խնդրեմ զիմ կարեւոր :
Երկուց կենաց պաշար է ինձ ,
երբ բարութեամբ դարմանեմ զիս :
Շատ կը սիրեմ ազգս պատուել ,
բայց քսակս դեռ չի ներեր :
Օբօսարան ամսական տամ ,
հիւանդանոցն ալ ի՞նչպէս տամ :
Սիրտս յօժար ձեռքս տրկար ,
ի՞նչպէս ընեմ գործ բարերար :
Սիրահար եմ ես իմ ազգիս ,
բայց միայն շահ խնդրեմ անձիս :
Թող ըսեն ինձ ան քեզ սա տա՛ր ,
չըսեն եղի՛ր ազգիս սատար :
Թող տան ինձի ազնիւ պաշար ,
չըսեն եղի՛ր մեզ բարերար :
Ես ազգիս եմ միշտ սիրաւառ ,
բայց չըսեն այս բեռն ալ դուն տար :
Եղբա՛րք դուք միշտ ինձ օգնեցէք ,
ինձմէ պատրաստ միայն օրհնե՛նք :

Նայեցէք ի՞նչ սէր ունիմ ձեզ ,
 որ ձեւերով քաղեմ զձեզ :
 Արչափ փարիմ մտերմաբար ,
 դուք օգնեցէք ինձ հայրաբար :
 Արչափ փարիմ բարեկամով ,
 թող սիրեն զիս մեծ խնամով :
 Սեղան կ'ուզեմ ինձ բարեւի ,
 քան ազգիս մէջ այր փարեւի :
 Արուն սեղանն է բարեւի ,
 անոր տէրն է ինձ փարեւի :
 Հտեմարանս իմ լիուլի ,
 ի՞նչ կ'ուզեմ քան զայն աւելի :
 Իսկոյն կ'ըլլամ շնորհակալ ,
 երբ ինձի տան ձրի պատառ :
 Ես չեմ սովոր այն խնջոյին ,
 բայց հնազանդ եմ ձրիին :
 Ինձի չափ ես ալ ունիմ բեռ ,
 ի՞նչպէս ճարեմ ես ազգիս խեր :
 Իմ ցաւս ինձ չէ՞ բաւական ,
 որ հնարեմ այլոց դարման :

Բաւական է որ զիս շահեմ,
եւել բան է ազգիս օգնեմ:
Ես չեմ ուզեր այնպէս հրաման,
ազգիս համար ընել դարման:
Ինձի՞ մնաց ազգիս օգնել,
թող վերցունեն ամենքն իր բեռ:
Ես կը տքնիմ զիս շահելու,
ուրիշին գործն ինձմէն հեռու:
Միայն ես զիս կ'ուզեմ խնամել,
ինչո՞ւս պէտք է ազգիս օգնել:
Նայիմ որ ես ինձի քաղեմ,
ի՞նչ պէտք է որ այլոց սփռեմ:
Դժուար բան մը ինձ կը թուի,
քիչ մը օգնել բարեկամի:
Թէպէտ քիչ մը կ'ուզեմ օգնել,
զբաղմունքս կ'ըլլայ արգել:
Ար խոստանամ բարիք մ'ընել,
տկարու թիւնըս չի ներեր:
Թէպէտ քիչ մը կը խոստանամ,
կատարելու տկարանամ:


Խոստանալը դիւրին սեպեմ,
ոչ որ գործովս ճշմարտեմ:
Դիւրին սեպեմ քաղցրաբանել,
ձանձրութենէ զիս աղատել:
Ոչ սաստ ոչ խօսք մտիկ կ'ընեն,
կու գան իմ տունըս կը բաղխեն:
Մարդ չէ դուռը՝ աղքատ մի է,
գնա՛ ըսէ տանտէրն հոս չէ:
Գնա՛ կ'ըսեմ սրնկէ գընա՛,
հիմայ քարը գլխուդ կու գայ:
Աղքդ միայն զի՞ս կը տեսնայ,
գնա՛ քիչ մ'ալ ազգիս վրայ:
Տղա՛ դուռը աղէկ գոցէ,
չըլլայ մէկը գայ հաց ուղէ:
Գլխու ցաւ մը կը պատէ զիս,
երբ աղքատը կ'ստիպէ զիս:
Այս կանոնը կամքիս դէմ է,
երբ կարօտեալն ինձի դիմէ:
Միայն ասով եմ ապահով,
որ երբ չի գար աղքատն իմ քով:

Անշուշտ կ'ըլլամ ես ցաւակիր ,
երբ ինձի տան աղերսագիր :
Ա'ուզեմ ըլլալ մխիթարիչ ,
արծաթին սէրն արգելք է ինձ :
Ա'ուզեմ խնդիրքըդ կատարեմ ,
ձանձրութեանը յանձնառու չեմ :
Հիմայ գնա՛ վաղը կ'ընեմ ,
վաղն ալ հոս չէ ըսել գիտեմ :
Այսօր գնա՛ վաղուան մնայ ,
վաղն ալ տեսնանք ո՞վ կը մնայ :
Ի՞նչ խեր տեսեր եմ քենէ որ ,
եկեր կու լաս քու կին վատ օր :
Ի՞նչ կ'աղաչես երեսիս վեր ,
գնա՛ ուրիշն ընէ քեզ խեր :
Իմ քսակս պէտք է լեցուն ,
ցոյց մի՛ տար ինձ քու մերկութիւն :
Պրամս վարձու տամ եւեջնայ ,
աղքատն ինչո՞ւ ձեռք կը բանայ :
Անկարօտ կեանք ես կը խնդրեմ ,
կարօտեալներն ինձ կը դիմեն :

Պինտ երեսն ու ուզան բերան ,
միայն ինձի կու գան կու լան :
Աղէկ բան չէ որ աղքատ մը ,
երբ կը սովլի մեր տան դուռը :
Ով իմաց տայ խեղճ մուրացիկ ,
յանդիմանեմ ես այն սաստիկ :
Ինձի կու գան կ'աղաղակեն ,
կ'ուզեն որ զիս աղքատցունեն :
Զիյտեմ ժամն ալ ո՞ր կողմ կայնիմ ,
որ գանձանակ չի գայ իմ դին :
Քահանան տուն ինչո՞ւ կու գայ ,
միայն պէտքի ատեն թող գայ :
Օտտիկ Օնունդ տաղաւարներ ,
որչափ կու տամ տունօրհներէքներ :
Արժապետն ալ կ'սպասէ լուռ ,
նուէր առնուլ կաղանդ աւուր :
Գրավաճառն ալ գործ չունի ,
նոր դիրք ելաւ կ'ըսէ ինձի :
Լուսարարն ու ժամկոչ տնտես ,
ի՞նչպէս նայիմ անոնց երես :

Թշնամի շատ իմ քաակիս ,
ո՞րմէ կրնամ ազատել զիս :
Չեղայ ազգիս խորհրդակից ,
իմ դրամս թող մնայ ինձ :
Շատ քուէի տէր ալ չեղայ ,
միայն իշխել ազգիս վերայ :
Ինչո՞ւ ապրանքս ընեմ ցրօն ,
ազգիս համար , որ չեմ պարոն :
Շտեմարանս երբ որ լինայ ,
որ մը ձեզ ալ բաժին կ'ելլայ :
Ուր որ տեսնամ ցաւալից տուն ,
սրտադող եմ մտնալ այն տուն :
Շատ դժար դործ ինձի համար ,
բարեխօսել այլոց համար :
Եղաչելու այլոց համար ,
բեռ մը սեպեմ ծանրանժար :
Չանձրոյթ սեպեմ միջնորդ ըլլալ ,
թող չըսեն ինձ խաղաղարար :
Չեռքերս միայն գլխոյս համար ,
չիյտեմ ըլլալ ազատարար :

Աւրիշին աչք հոգացողներ ,
իլենք անաչք են մնացեր :
Շուքէս վախցող մէկ մարդ մի եմ ,
ի՞նչպէս մեծ տեղ ազգս յիշեմ :
Ազգիս համար բարեխօսեմ ,
եկամուտներս վախնամ սեղմեն :
Խրատ առնուլ ինձ կը դիմեն ,
երբ նեղութեան մէջ կը մտնեն :
Ինչ որ ըսեն ինձի համար ,
կեանքս վարելն է իմ համար :
Հանգիստ կեանքիս եմ հոգատար ,
ինչ որ ըսեն անարդարար :
Իմ գիտցածէս եմ անվրէպ ,
թէ եւ ըսեն ինձի այս կերպ :



Սրտին խուփը է ծանր քար ,
ի՞նչպէս գործէ եղբայրաբար :
Թէ որ մեռնի մասն էական ,
ի՞նչպէս օգնեն ամբողջական :

Խորշակահար ծառոյն ներքոյ ,
մի սպասէք միրգ քաղելոյ :
Ունայնաքիրտն շրջի պասքեալ ,
թէ որ գետն է երաշտացեալ :
Անգութ սիրտն է ջրհոր ցամաք ,
չըլլայ տանիք անոր դորակ :
Պարապ դորակ միշտ տարուբեր ,
զովացուցիչ չըլլար երբէք :
Մեծ մեծ տուներ այգեստաններ ,
մէջն անօթի են ծառաներ :
Չուր աշխատի անանկ կարծիք ,
երբ յոչընչից յուսայ մէկ ձիւք :
Արտին ամեն դին ալ ոչինչ ,
չըլլար անկէ ունկի չափ ինչ :
Թուղթ ծամելով հանապազօր ,
ո՞վ կիշտանայ տեսնենք մէկ օր :
Ուխմպիա կարծր լերին ,
արօր քութա ունայն վարին :
Ինչ որ ըսենք քարասրտին ,
չի կակղնար ամենեւին :

Խրատն վայլէ ամաչողին ,
ոչ թէ կարծր պինդ երեսին :
Սիրտը գանձին մէջ է պահած ,
ի՞նչպէս ըլլայ քեզ ողորմած :
Ե՛րբան սիրած է իր ոսկին ,
որ չերեւար մէկը աչքին :
Գանձին հետը ՚ի միասին ,
որ մը կ'ըլլայ չարին բաժին :
Եւ քետալը լա՛ւ է զուրցեր ,
թէ ոմանք են անբարեսէր :
Եւ թէ անգուժ եւ աննուէր ,
որ ըսել է սուտ ազգասէր :
Ի՞նչ ունիս դու որ չես առած ,
որ կը պարծիս իբրեւ չառած :
Ով որ ըլլայ արծաթասէր ,
ի՞նչպէս կ'ըլլայ այն ազգասէր :
Եկու լսէ արծաթասէր ,
ինչ որ ըսաւ Յիսուս մեր Տէր :
Արծաթասէր մարդոց համար ,
արքայութիւն մսնել դժար :

Տուր աղքատաց երբ լսեցիր ,
երեսիդ դէմ թթուեցուցիր :
Ետեմարանը մեծցուցիր ,
արդիւնքդ հոն հաւաքեցիր :
Երբ պահանջեն քեզմէ հողիդ ,
որո՞ւ թողուս պիտի ոսկիդ :
Եւ զուրցած է Փրկչին նման ,
սաղմոսերդուն Ռաւիթ Յեսեան :
Երբ կեանքերնին աստի փոխեն ,
տան զարդարանք հետերնին չեն :
Թողուն պիտի օտարներուն ,
ամեն ապրանք եւ մեծութիւն :
Ով մեծութեանն ապաւինի ,
այն ծուխի պէս կը պակասի :
Ով աղքատին է ողորմած ,
անոր զաւակն կ'ըլլայ օրհնած :
Որչափ գանձիւք ես անուանի ,
ընդունայն է մարդ մտեղի :
Որչափ մարդս սիրով գանձէ ,
չը գիտեր թէ որո՞ւ ժողովէ :


Ստացուածոց սիրելութիւն ,
Աստուծոյ դէմ ատելութիւն :
Ազահն չուզեր այլք վայելեն ,
սակայն ինքն ալ չի վայելեր :
Գացէք տեսէք գերեզմաններ ,
հոն կը գտնէք թագաւորներ :
Ճիշտ վկայեն անոնց քարեր ,
որ մերկ մարմնով հոն են պառկեր :
Գանձ բազմաթիւ բեռով ոսկին ,
հոս թողուցին երբոր գացին :
Խելօք կեցիր սո՛ւտ ազգասէր ,
հրպարտ ընթացք մի՛ գործածեր :
Հայոց ազգէն գանգատ կ'ընես ,
չէ՞ որ դուն ալ նոյն ազգէն ես :
Ազգիս բանը կ'ըսես ունայն ,
դուն ո՞ր ազգին ես միաբան :
Ամենեւին բարեկեցիկ ,
միայն խնդրեն յիմար անձինք :
Թէ ճնանիլ թէ մեռանիլ ,
մերկ կը տեսնանք ամեն ի՞ժիր :

Թէ քեզ շատ դանձ ես համբարեր ,
սակայն մօտ է կեանքիդ դիշեր :
Թէ որ ազգիդ դուն չողորմիս ,
ո՞վ կը հանէ քեզ ողորմիս :
Որչափ ազգիդ անգուժ նայիս ,
ազգիդ ձեռօք պիտի թաղուիս :
Երտիդ մէջը ինչ սերմանես ,
չէ՞ որ դուն ալ զայն կը քաղես :
Ինչ որ խարճես զայն կը դանձես ,
ապա թէ ոչ բանի տէր չես :
Մեծ սեղանէդ թէ որ չուտեն ,
ի՞նչպէս քեզի մեծ անուանեն :
Սիրելի ես թէ որ սիրես ,
ապա թէ ոչ խորթ ընկեր ես :
Ըն ատեն ես դուն մաքուր սիրտ ,
երբ ընկերդ բռնես սուրբ սիրտ :
Որու եղեր ես բարեկամ ,
զայն վաստրկիս քեզ բարեկամ :
Եշխարհըս է միշտ լկանօք ,
մ'ըլլար բռնաւ բարձրամօք :

Աշխարհս է միշտ փոփոխական ,
մի՛ վստահիր գանձիդ այդքան :
Ամենայն ինչ է ընդունայն ,
զայն յիշէ գէթ օրն մի անդամ :
Աղքատն ըրէ քեզ բարեկամ ,
որ բիւրաւոր առնուս փոխան :
Այս աշխարհս է փուճ աղցաւոր ,
սէր ունեցիր աղքատ եղբօր :
Աղքատն ըրէ քեզ բարեկամ ,
որ երկնայնոց ըլլաս անդամ :
Երկրորդ միջնորդ աղքատն է մեզ ,
արքայութիւն թէ որ կ'ուզես :
Աղքատք ունին արտօնութիւն ,
դիւրին մտնալ արքայութիւն :
Արքայութեան մեծ բանալին ,
Աստուած տուաւ ձեռքն աղքատին :
Ղուկն ուտելիքդ ինչպէս զնես ,
քահանայք եւ աղքատք այնպէս :
Ղուկն քեզ ունիս ծառայ եփող ,
անոնք իրե՛նք են աշխատող :

Ինչ որ կ'ուզեն , կ'ըսես հատաւ ,
որ մ'ալ քեզի կ'ըսուի հատաւ :
Հաց շատ ջուր շատ քեզի համար ,
ո՛ւր է քիչ մ'ալ ազգիդ համար :
Քու շահուդ միշտ ճարտարագործ ,
խեր մը գտա՞ր ազգիդ ցաւոց :
Շահուդ համար բարեհնար ,
ո՛ւր է ազգիդ քիչ մը պաշար :
Սուրբ սուրբ հաներ ես քու անուն ,
գործ մը շունիս ազգիդ սիրուն :
Ար վառվրուիս ազգիս սիրուն ,
յօրինեցի՞ր բան մը սիրուն :
Ազգիս սիրուն շատ խմեցիր ,
անոր արտը ի՞նչ ցանեցիր :
Ազգիս սիրուն ըմպել զբաժակ ,
Փրկչին բրածն է ընդունակ :
Որ ճշմարիտ է մարդասէր ,
մահուան խաչով ցըցուց իր սէր :
Քրիստոնէի է յատկութիւն ,
բարեսիրտ ըլլալ ամենուն :

Այն քրիստոնեայն է խաբեբայ ,
երբ ազգային սէր չունենայ :
Թէ Աստուծոյ է աներկիւղ ,
ինչպէս ըլլայ սիրտը կակուղ :
Հաստատ բռնէ խորհուրդ շարին ,
քան հրաման Աստուածային :
Եղբայրասէր թէեւ չըլլար ,
պատասխան ալ տայ լրբարար :



Այդպէս խրատ մի՛ տայք ինձի ,
իրբեւ բարեոք Ազգասիրի :
Ո՛ր է այնպէս խրատատու ,
որ իմ դանձա ընեմ պահճու :
Ես չեմ ուզեր այնպէս խրատ ,
որ պահանջեն ինձմէ իմ վարդ :
Ինչ որ Աստուած ինձ տուեր է ,
մինակ վայլել ինձ արժան է :
Ատանգաւոր ալ ըլլայ ինձ ,
տունս ինչո՞ւ տամ իմ ազգիս :

Թէեւ չունիմ ժառանգաւոր ,
իմ քովս մնայ իմ կարեւոր ։
Որչափ իմ քովս վտանգաւոր ,
Ազգիս տամ նէ կ'ուտէ աղուոր ։
Իմ ապրանքս չէ ինձի բեռ ,
ահա խօսիմ ես անվեհեր ։
Իմ ապրանքիս ես ըլլամ տէր ,
Թէեւ ըսուիմ սուտ ազգասէր ։
Այլ եւս կ'ուզեմ աւելցրնել ,
գանձս որչափ եմ համբարեր ։
Ազգիս հետը բազդատեցի ,
միայն դրամս ինձ հաճելի ։
Դրամս ինձի է լաւ ընկեր ,
ինչուս պէտք է ազգէս ընկեր ։
Ա'ուզեմ այնպէս ընկերու թիւն ,
որ բնաւին չի գան իմ տուն ։
Ա'ուզեմ այնպէս մէկ բարեկամ ,
որ բան չուզէ բնաւ անգամ ։
Ա'ուզեմ այնպէս մէկ բարերար ,
որ չի վարուիմ եղբայրաբար ։

Չուենենամ ես այն դրացին ,
որ կը խնդրէ ինձմէ կացին :
Ինձ կը վայլէ ամեն խորտիկ ,
դրացինին կ'օգտէ խոտիկ :
Ես չեմ ուզեր այնպէս դրացիք ,
որ մերթ կ'ըլլան ինձ մուրացիկ :
Ես միշտ կ'ուզեմ այնպէս ծաղկոց ,
որ չիմացուի մեր ազգայնոց :
Չեռքս ըլլայ փուռնջ մի ծաղիկ ,
չի հոտոտան մեր ազգայինք :
Առուիս ջուր եւ տանս ջուր ,
չըլլայ ըսեն ինձի ալ տուր :
Չեմ ուզեր քովս ուրիշին կուղ ,
մինչեւ քաղեմ ծառիս պտուղ :
Օգո՛յշ կեցէք մե՛ր տղաքներ ,
չըլլայ ուտեն մեր պտուղներ :
Այգւոյս մէջէն դո՛ւրս ըրէք դո՛ւրս ,
չըլլայ ուտեն քանի մ'ողկոյզ :
Մի՛ թափթըփէք արտիս ցորեն ,
ուրիշները չի գան ժողվեն :

Թէ աղքատ են աղքատ վարուին ,
 ինչո՞ւ ինձմէ քաղել նային :
 Աղքատաց պէտք է ժուժկալել ,
 ոչ ինձի պէս ուտել խմել :
 Զանդերձիւ ալ պէտք է զատուին ,
 ոչ որ ինձի պէս զարդարուին :
 Զարուստք թէեւ ծանր խօսին ,
 համբերել պէտք է աղքատին :
 Զրամայելն է հարուստին ,
 աղքատք պէտք են երեսն դետին :
 Աղքատք կ'ուզեն ինձ նմանիլ ,
 յայնժամ կու գայ ինձ ծիծաղիլ :
 Քաղցր համեղ ուտեմ իմ սեր ,
 թող չանուանեն զիս ազգասէր :
 Խնդամ այնպէս վայելչութեան ,
 երբ ես ինձի խրախճանամ :
 Օստիկաբար հացն է ինձ համով ,
 ոչ որ ուտեմ ընկերներով :
 Վարկանդակը բուռէն ա՛ռ բե՛ր ,
 չքաւորին Աստուած է տէր :

Խորիսխ կ'ուզէ իմ ախորժակ ,
չատ կը սիրեմ կակուղ ճաշակ :
Սեր ալ կ'ուզեմ շաքար ցանած ,
աղքատին կերն է քարթու հաց :
Չկնատապակն բերէ՛ք տաք տաք ,
պատրաստ է մի խորով վառեակ :
Եփած գառը ներկայացո՛ւր ,
յետ այնորիկ գինի՛ լեցուր :
Ուտենք խմենք աղուոր մատղաշ ,
աղքատները կ'ըլլան չարքաշ :
Ճամբորդու թիւնս ձիով կառքով ,
աղքատ ծառան քալէ ոտքով :
Կեր ու խուսով զբօսանքով ,
փառաւորիմ ես իմ կեանքով :
Ե՛յն զբօսանքն ես շատ սիրեմ ,
երբ դրացիք իմ հետս չեն :
Ընկերութիւն այն պատուական ,
երբ չեն ուզեր ինձմէ դարման :
Ե՛յն ընկերը շատ կը սիրեմ ,
երբ միայն ես անկէ քաղեմ :

Երջանկութիւն է ինձ յարմար ,
երբ կը ցնծամ առանձնաբար :
Ե՛յն բարիքը որ ես չունիմ ,
ինչո՞ւ այլոց համար հոգնիմ :
Ե՛յն բարիքն որ ես չունենամ ,
ինչո՞ւ այլոց համար խնդամ :
Չե՛մ ուզեր ես այնպէս բարին ,
որ ուրիշն ալ ունի բաժին :
Խնձոր մը որ ես կեղեւեմ ,
կ'ուզեմ միայն ես ճաշակեմ :
Ես փոխ տալու դրամ չունիմ ,
գրաւդ տա՛ր մէկ ուրիշին :
Մերին չափ է մերին ձաւար ,
մէկդի՛ դնա կ'ըսեմ աղբար :
Մի՛ սպասեր աղէկտուր ,
այս տունը քեզ չի տար ալիւր :
Փուճ կ'աղաչես դէպ իմ երես ,
հոգիդ սիրեմ այս գործը տե՛ս :
Ինչո՞ւ կու տայք ինձ ձանձրութիւն ,
թողէ՛ք ըլլամ ես իմ գլխուն :

Այլոց համար երբ հոգնիմ ես ,
խսկոյն մեռնի իմ հոգւոյս կէս :
Եղբօր թաղման ինչո՞ւ հոգնիմ ,
եւ ալ օր մը պիտի մեռնիմ :
Օ՛ր՝ փոյթ է ինձ վասն այլոց ,
ելլամ երթամ գերեզմաննոց :
Պատշգամ կ'ուզեմ տանս վրայ ,
բանտարգեալը թող երթայ լայ :
Պատսպարիլ նայիմ հանգիստ ,
ընկերս թող երթայ խրճիթ :
Հիւանդտես ե՞րբ կրնամ երթար ,
զբաղմունքիս եմ հոգատար :
Պանդուխտ մարդու դռներս է գոց ,
իմին տունս չէ՛ հիւրանոց :
Թէ ուրիշը հիւանդանայ ,
անոր դեղը Նստուած հոգայ :
Բժիշկն իմ չէ հոգածութիւն ,
թէ այլոց է հիւանդութիւն :
Թէ հիւանդ է ինձի ի՞նչ պէտ ,
թող ամեն մարդ դանայ իր պէտ :

- Ամեն ցաւոց բժիշկներ կայ ,
հարցաքննէ ու բերել տայ :
Ես չեմ կրնար բժիշկ բերեր ,
որչափ սաստիկ է հիւրնդցեր :
Հիւանդու թիւն է ամենուն ,
ճարր դոնայ թող իր գլխուն :
Ես չեմ ուզեր անանկ բարել ,
որ ազդային ցաւ կայ ներքել :
Ազգս այնչափ ես կը սիրեմ ,
առանց դրամ կը բարեւեմ :
Ձրի ի՞նչպէս մարդ բարեւեմ ,
թէ յոյս մի ալ չըլլայ ետքէն :
Արապետս անգամ չեմ բարեւեր ,
թէ որ հարուստ չէ ինձմէ վեր :
Աղքատն ալ ի՞նչպէս բարեւեմ ,
վախնամ պատուոյս կ'ըլլայ ընդդէմ :
Աղքատին տուն կամ թէ խանութ ,
հանդիպիլը սեպեմ ամօթ :
Աղքատն որչափ ըլլայ խոհեմ ,
խորհրդակցիլ ես կ'ամաչեմ :

Աղքատին հետ ինչ որ բանիմ,
անոր կարգը կը գանուիմ:
Չէ՛ յաչս իմ պատշաճաւոր,
աղքատին հետ ըլլամ բանուոր:
Ի՞նչ գարշելի է այդ կանոն,
աղքատին հետ վարել պաշտօն:
Եկաւ նստաւ խորհրդարան,
հասարակ մարդ մ'որ չէ արժան:
Ես չեմ ուզեր նուաստ մարդիկ,
որ ինձի հետ նստին հարկինք:
Ինչո՞ւ կ'ըլլան ինձ խօսակից,
որ կ'անուանին փոքր մարդիկ:
Հրաժարում տալ հարկադրիմ,
որ այս ցաւէն շուտ ազատիմ:
Թէ ամեն մարդ իր չափ ճանչնայ,
մեր պատիւն ալ ողջ կը մնայ:
Ինձմէ առաջ ինչո՞ւ քալէ,
որ ինձի չափ պատուաւոր չէ:
Ժամն ալ ինձմէ առաջ կայնի,
իրբեւ ազգիս մէջ մէկ յարդի:

— 541 —

Նոր հարուստ մի տեսայ այսօր ,
իմ հետ եղաւ մէկ ձիաւոր :
Ինչո՞ւ կ'ըլլայ ինձ խօսակից ,
երբ պատահինք մէջ խնջոյից :
Յարգական բառ մ'ալ չը գիտէ ,
երբ անուանէ զիս կամ գոչէ :
Պայծառ հանդերձ վրան չունի ,
խնջոյից մէջ իմ կարգ նստի :
Խօսք եւ զրոյցն է անպիտան ,
այնպիսին ես սեպեմ խոտան :
Չէ ճոխաբան կամ լեզուանի ,
անանկին հետ ո՞վ կը յարի :
Ե ինականին խօսքն է տխմար ,
ինչո՞ւ վարիմ ընկերաբար :
Կասկածոտ է անանկին խօսք ,
չէ՞ որ ես եմ ճշմարտախօս :
Մաքուր սիրտ մը չի գտայ որ ,
ես ալ սիրտս կապեմ անոր :
Մեր թաղն ինչո՞ւ այն կը նստի ,
այր մի նկուէն վտարանդի :

Ես լաւ գիտեմ թէ այն ո՛վ է ,
ինչո՞ւ այնքան վառաւոր է :
Դրացինս բարձրագոյն տուն ,
ինչո՞ւ շինէ քան զիմս տուն :
Տանս հովը և տեսարան ,
այլոց շէնքով արգիլուեցան :
Օառիս շուքը ինչո՞ւ կ'առնէ :
տակը հանդէիլ ինձ կը վայլէ :
Ի՛նձ կը վայլէ քղամիթ կարմիր ,
ոչ թէ այլոց հանդերձ ընտիր :
Ժամացոյց ի՞նչ պէտք է անոր ,
որ մեր քովս էր սպասաւոր :
Ինձ չի՛ վայլեր որ զայն պատուեմ ,
որ ինձ նման դեռ չէ՛ խոհեմ :
Ես որ կ'ըսուիմ պարտն աղա ,
իմ ցորենս առաջ աղա :
Անձրեւն առաջ ինձի՛ տեղա ,
դրացինս ետքէ՛ն թանայ :
Եյս բանին ալ կ'ըլլամ տրտում ,
երբ սուրճ կու տան առաջ այլում :

Միշտ իմ դործս պէտք է յաջող ,
 թող ուրիշներն ըլլան բանթող :
 Իմ ճրագս պէտք է պայծառ ,
 թող ուրիշինն ըլլայ խաւար :
 Ինձի չըլլայ ձախորդութիւն ,
 թող ուրիշը խմէ իր թոյն :
 Ճամբաս երթամ ես սրաթեւ ,
 բայց ուրիշը վերեւ կորեւ :
 Իմ արդիւնքս ունի համ հոտ ,
 այլոց պտուղ կ'ըլլայ մեցոտ :
 Իմ տնկած ծառս է պտղալիր ,
 ուրիշին լոկ սաղարթալիր :
 Իմիններս սիրեմ յաւէտ ,
 ուրիշինը սեպեմ անպէտ :
 Ես կը նայիմ ցորենս քաղեմ ,
 ոչ թէ եղբօր արտը հերկեմ :
 Քառսուն ձեռք ալ ունենամ ես ,
 մէկը ազգիս չեմ դործածեր :
 Ես իմ դործս լըմնցուցի ,
 սպասելիք չունիմ քեզի :

Եղբօր գործը լրմննալու ,
ինձի հարկ չէ՛ սպասելու :
Վրացինիս ըրած վաճառ ,
տաղնապ կու տայ սրտիս թշուառ :
Եկաւորներ (Ռ-ՂԵՐԷ) սրտիս ցաւ տան ,
երբ որ կ'երթան այլ խանութ պան :
Եփսո՛ս իմ պատուական անուան ,
որ զիս թողուն այլոց կ'երթան :
Եկաւորներ ինձ դան ջուխտ ջուխտ ,
բնաւ չերթան այլոց խանութ :
Վրացինիս ապրանքն է խորթ ,
բայց խմինս ազնիւ խորոտ :
Իմ ապրանքս պէտք է ծախուի ,
քուկինդ հիմայ մնայ մէկ դի :
Ինչ տաս ինձ որ ապրանքդ գովեմ ,
չէ նէ իսկոյն կը պարսաւեմ :
Որ շահուն մէջ չունիմ բաժին ,
փուճ տեղ ինչո՞ւ հալիմ մաշիմ :
Ե՛յդ շահուդ որ մասնակից չեմ ,
առուտուրդ կը խանգարեմ :

Անցած տարուան ըրածդ մոռցար ,
որ այդ բանին մաքառեցար :
Արտիս գործին չաշխատեցար ,
հիմայ ի՞նչպէս ինձի ճանչցար :
Աղէկ օրդ զիս չի ճանչցար ,
հիմայ ինձմէ կը խնդրես ճար :
Ընդհատ ատենդ կոկոզավիզ ,
հիմայ եկեր կեղծաւորիս :
Ըրաւէր չեկաւ հարկինքիդ օր ,
աղերսագիր բերես այսօր :
Օ, իս ուրիշին կը բամբասես ,
հիմայ եկեր զիս կ'աղաչես :
Անցած օր ալ շանս զարկիր ,
սիրտս չուզեր երեսդ նայիլ :
Աեցիր հիմայ նեղի լծեմ ,
որ յանցանքդ քեզ ճանչցընեմ :
Այն ո՞վ է որ ինձի իշխէ ,
եւ աներկիւզ զայն խօսքն ըսէ :
Արտիս դպաւ իբրեւ դանակ ,
որ խօսեցաւ ինձ համարձակ :

Ինչո՞ւ խօսքին ներքեւ մնամ,
պէտք է անոր յաղթել ջանամ:
Այնպէս սաստ մը տամ ես անոր,
որ վշտացուց զիս անցած օր:
Երբ առջեւէն օր մը անցայ,
ինչո՞ւ չելաւ ոտքի վրայ:
Ո՞վ կ'ըլլայ այն մէկ տմարդի,
որ իմ առջեւըս կը բազմի:
Ի՞նչպէս անէծք չի տամ արտանց,
որ ինձ պատճառ եղաւ չարեաց:
Ըրածին չափ օ՛իս պատժեցաւ,
արժանապէս իրեն դտաւ:
Միմեանց պէտք է տալ թողութիւն,
բայց կ'ուզեմ որ այն դայ իմ տուն:
Անոր վրայ ես որ մեծ եմ,
անիկայ ես ինչո՞ւ յարգեմ:
Որչափ կ'ուզեմ վեր վեր նստիլ,
ինձի կ'ըսեն 'ի վայր մատիր:
Միշտ անիկայ է ինձ կարօտ,
ինչո՞ւ խօսի ինձի հետ խորթ:

Ա եղ ծ աւ որ ու թիւն ալ չընէր ,
զիս ճանչնալով իբրեւ իր տէր ,
Ասկուղ ինչո՞ւ չերթար իմ հետ ,
որ կը խօսիմ բոլե շխին հետ :
Ի՞նչ լաւ կ'ըլլայ այս բառը փոխուի ,
ազգասէրը անձնասիրի :
Ազգասէր բառ մը յիշելով ,
զիս անհանգիստ կ'ընեն յովով :
Բարիք մ'ընել որ չեմ ուզեր ,
թող չանուանեն զիս ազգասէր :
Ես չեմ ճանչնար ուրիշին բեռ ,
թող ըսեն ինձ սուտ ազգասէր :



Այսպէս խօսքեր բնաւ չըսեր ,
թէ ճշմարիտ է ազգասէր :
Եւստ խուած է այսպէս խօսքեր ,
ուր որ տեսանք սուտ ազգասէր :

